ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2025 թվականի N 1690 - Ա

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ տրանսպորտային միջոց 1) և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե)՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր 1 և ծրագիր 2-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն ԷՍ.Ա» ընկերության միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կնքված N T1-T2-CW-01 պայմանագրի շրջանակներում ձեռք բերված և նշված պայմանագրի հիման վրա պատվիրատուին սեփականության իրավունքով փոխանցման ենթակա գույքից կոմիտեին ամրացնել տրանսպորտային միջոցներ (այսուհետ՝ տրանսպորտային միջոց 2)՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ կոմիտեին ամրացված տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ տրանսպորտային միջոց 3) անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հանձնել հիմնադրամին՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում հիմնադրամի գործադիր ղեկավարի հետ ապահովել՝

1) սույն որոշման N 1 հավելվածում ներառված տրանսպորտային միջոց 1-ի նվիրատվության պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրա հետ կապված, ինչպես նաև տրանսպորտային միջոց 1-ի պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով հիմնադրամի միջոցների հաշվին.

2) սույն որոշման N 2 հավելվածում նշված տրանսպորտային միջոց 2-ի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ տրանսպորտային միջոց 2-ի պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով կոմիտեի միջոցների հաշվին.

3) սույն որոշման N 3 հավելվածում նշված տրանսպորտային միջոց 3-ի անհատույց օգտագործման պայմանագրերի կնքումը (այսուհետ՝ պայմանագրեր)՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրերի կնքման և տրանսպորտային միջոց 3-ի տեղափոխման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման հիմնադրամի միջոցների հաշվին:

5. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված աշխատանքների կատարման նպատակով՝ սույն որոշման NN 1 և 2 հավելվածներում ներառված տրանսպորտային միջոցները ենթակա են տեղափոխման պետական շարժական գույքի պահառության նպատակով կոմիտեին ամրացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2, փողոց 79 հասցեում գտնվող պահառության վայր՝ հիմնադրամի միջոցների հաշվին.

2) սույն որոշման N 2 հավելվածում ներառված տրանսպորտային միջոցների նկատմամբ առկա գույքահարկի պարտավորությունները ենթակա են վճարման կոմիտեի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ